



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**


Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material



Ltn  
1848

1999

198-22

ՔՆԱՐ

ՄՂԵՑԻՈՑ ԵՒ ՎԱՆԵՑԻՈՑ

(ՄԻՆՉԵՒ ԵՅԻՄ ՉԸՐԵՏԵՐԵԿՈՒԵՐՆ  
ԵՐԳԵՐ)



1728.

ՅՈՂՈՎԵՍՑ

ՄՐԻՄՏԱԿԷՍ ՎԱՐԳՆՊԵՏ ՍԵԳՐԵԿԱՆՆ



Ի ՎԱՂԱՐՇԱՊԱՏ

Ի ՏՊԱՐԵՆԻ ՄՐԱՈՑ ԿԱԹՈՒՂԻԿՆ ԻՃԱՄԵԾԻ

ՌՅԻԳ — 1874



**ՃԱՆՈՒՅՈՒՄՆ**

Ազգի մի կամ ժողովրդեան ճաշակին, աշխոյժին, և առանին ու ընկերական աճմանն ու ձգտմանն հասու լինելու համար պէտք է լսել նորա երգերը:

Առանց ցաւելու չեմք կարող տեսլ՝ որ մինչև 19 դարը մեր ժողովրդական երգերը զուրկ էին ուշադրութենէ, ըստ որում կարտայայտէին մեծ մասամբ ժողովրդի այն զգացմունքները, որ կրօնական նկատմամբ անվայել և աններելի էին ժամանակի աշխարհուբաց բարեպաշտութեան լսելեացը: Այս պատճառաւ կամ աշխուժաւոր երգիչները հազիւ թէ կվստահանային յայանել իւրեանց զգացմունքը, կամ յայտնածը այն է նոցա երգերը հազիւ թէ հեղինակէն քանի մի տարի աւելի կապրէին՝ և այն ահուգողով:

Միայն ԺԹ. դարու զարգացած ազգայնոց ջանից և եռանդեանն եմք պարտական, որ քիչ ու շատ պահպանուածները, կամ նոր ժամանակի ազգային տաղանդաւոր երգիչների գործքերը մեծ խնամով և ուշադրութեամբ ժողոված ապահովեցին մոռացութեան և կորստեան վտանգէն:

Ի նկատի ունելով, որ մինչև այժմ Մշեցոց և Վանեցոց ժողովրդական երգերը դեռ ոչ մի երգարանի մէջ առնուած չեն, այդպիսի աշխատութիւն մի՛ թէ և կարի թեթև՝ ինձ բաժին համարեցի. և ահաւասիկ չորս տարուան ընթացքի մէջ մուրացիկ Մշեցիներէն և Վանեցիներէն զգուշութեամբ ժողոված այս սակաւաթիւ երգերս կուզեմ հրատարակական առնել. դուրս է և այս փոք-

**ՀՐԱՄԱՆԱԻ**

**Տ. Տ. ԳԵՈՐԳԵԱՅ Դ.**

ՎԵՋՎՈՒ. ԵՒ ՍՐԲԱՋՆԱԳՈՅՆ ԿԸԹՈՂԻՈՍԻ ԸՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ.

29 1855 9 1848. Ըս.

րիկ տետրակովն յաջողած լինեմ կարծիք ապուր բանասիրաց՝ որ Հայերէն զբարառ լեզուն երկար ժամանակ պահպանուած է եղել երբեմն նշանաւոր, իսկ այժմ ոտնակոխ եղած զաւառաց մէջ: Այս երգերովն կարելի է դատել նա և, թէ վայրենամիտ զբացեաց անտանելի հարստահարութեան և դառն զրկանաց ենթակայ եղած և յետին չքաւորութեան մէջ մաշուած ժողովուրդ մի՞ դեռ զիտէ եռանդեամբ արտայայտել իւր սիրոյ, ուրախութեան, և ուրիշ զգացմունքները. իսկ երգոց երաժշտական ներդաշնակութեան կողմէն պէտք է ասել, որ Մշեցւոց և Վանեցւոց երգերը կգերազանցեն մեր բոլոր միւս զաւառական երգերէն, Աողբեցւոց, և Շահարիարցւոց համբաւուած ժողովրդական երգոց ներդաշնակութիւնն անգամ սոցա մօտ աննշան է:

ՍԵՆՏԵՆՏԵՆՏ

1872, ՅԱպրիլ—նիս.



Ա.

Մենդեան երգ \*).

Արդ ցնծացէք ուրախացէք այլելուիս,  
 Այսօր ծնունդն ի Մայրամիսն այլելուիս,  
 Մայրամ գնաց դուռն յայրին այլելուիս.  
 Շնչաւ եբեր Յիսուս որդին այլելուիս:  
 Յիսուս որդին մկրտեցին այլելուիս,  
 Բուրդ խանձարուր փաթութեցին այլելուիս,  
 Սուրբ Յովհաննէս քեաւոր արին այլելուիս.  
 Սուրբ Յովհաննէս էրնիկ ի քե այլելուիս:  
 Քրիստոս քեօ զիրկ մկրտեցին, այլելուիս,  
 Շուշ 1 օրօրոց օրօրեցին այլելուիս:  
 Էս ա տուն շինած աշնան զինով այլելուիս,  
 Ու զարգարած գարնան ծաղկով այլելուիս,  
 Թոները մէջը Եկեղեցի այլելուիս,  
 Տախտակ վըրէն բղրի 2 լոյսի այլելուիս:  
 Սներ ի նե, ծառ խնկելի այլելուիս,  
 Այաշ 5 վերէն ծալծալ ոսկին այլելուիս,  
 Խարսներ մէջին թուխ եղունիկ 4 այլելուիս,  
 Աւելն ի ձեռ փունջ մանիշակ այլելուիս:  
 Լաճու 5 անուն ինչ ի (այս ինչ) այլելուիս,  
 (Այս ինչը) նստե ծառի տակին այլելուիս,  
 Բրջամ 6 քցե վարդի փշին այլելուիս.  
 Սուֆրէն 7 առջև խազար բարին այլելուիս,  
 Վթղայն 8 յուր ձեռք նուան զինին այլելուիս:  
 Մամիկ մամիկ, դու ձի ծառայ այլելուիս,

(\*) Շատ տեղեաց ժողովրդոց մէջ Քրիստոսի Մենդեան ձրազարուցի երեկոյին տունէ տուն պտտելով զպիրները կամ փոքրիկ երեխաները կերգեն « Այսօր տօն է ծննդեան—աւետիս » երգը. իսկ այս երկու զաւառաց — Մշոյ եւ Վանայ ազգայնոց մէջ նոյն երեկոյին երգած երգն է այս:

1) Ապակի. 2) Անձանօթ բառ. 3) Գանձախարիթ. 4) Աղաւնի. 5) Տղայի. 6) Հեր, գանդուր. 7) Սփոռոց սեղանոյ. 8) Գինեոյ աման:

Սօլեր խաբի, որ ճովուայ ալէլուիա,  
Քեզնէ չըմ ուզի ձի մը ջորի մ' ալէլուիա,  
Քեզնէ չըմ ուզի գառն ու մաքի մ' ալէլուիա,  
Քեզնէ կուզեմ քիսսէ մ' ընկոյղ ալէլուիա:

Բ.

Ի Ս. Կարապետի Գլխայ վանեց.

Դիւ աղա ես, դիւ վագիր ես 1,  
Ամեն սրբոց զխաւոր ես.  
Մայրամ 2 կիւսին 3 դիւ քեաւոր 4 ես.  
Մաքիւր քեաւոր սուրբ Կարապետ.  
Ծառայ կընեմ քեօ շնորհքին.  
Ջօրքդ էլ շատ է սուրբ Կարապետին,  
Մուրատատու 3 սուրբ Կարապետ:

Դիւն ես արեւ, դիւն ես լուսին,  
Քեաւոր էլար Մայրամ կիւսին.  
Դիւան 6 նստար խըտ 7 Քրիստոսին,  
Դիւան արող սուրբ Կարապետ.  
Ծառայ կընեմ Լըն:

Սուրբ Կարապետ կանգնաւ յուսով,  
Գետ Յորդանան լցուաւ լուսով,  
Մուրատ 8 կիտաս ոսկի թասով 9,  
Մուրատատու սուրբ Կարապետ.  
Ծառայ կընեմ Լըն:

Սուրբ Կարապետ կանգնեցուցին  
Լուսեղէն խանդերձ խաղիւցին,  
Քրիստոս քեօ գիրկ մկրտեցին,  
Մկրտարող սուրբ Կարապետ.  
Ծառայ կընեմ Լըն:

Աշխարհ ժողովան, եկան քեօ տես,  
Լոյս կփայլէր քեօ սուրբ երես,

1) Փոխարքայ, եղարքոս. 2) Մարիամ. 3) կուսին. 4) կերաւոր. 5) Խնորուածը կա-  
տարող. 6) Ատեն, գատատան. 7) Ընդ, հետ. 8) Իղծ, հայցուած. 9) Բաժակ:

Դիւ ամեն աղքեատին տէր ես,  
Մուրատատու սուրբ Կարապետ.  
Ծառայ կընեմ Լըն:  
Քե շինած են պանծր տեղաց,  
Քեօ մէջ պանի, Փրոն 1 ջաղաց,  
Մուրատ կիտաս ականջ երողաց 2,  
Մուրատատու սուրբ Կարապետ.  
Ծառայ կընեմ Լըն:

Քեօ չորս պիւրր 3 խայու 4 գեղ ի,  
Պանծր Գմբէթ անոշ տեղ ի,  
Սուրբ Կարապետ դարդին 5 գեղ ի,  
Դարդի դարման սուրբ Կարապետ.  
Ծառայ կընեմ Լըն:

Սուրբ Կարապետ խաւքու 6 նման,  
Որ շինած էր վըր 7 ուր խման,  
Ժողովեց դիւան, լցեց զնդան,  
Յաղթեց դիւան, քե կան եաման 8:  
Ասաց գեամ ըլլեմ քե փոշխան,  
Տանեմ թափեմ փրէյ պատման 9,  
Չիւր Քրիստոս գեայ գատատան 10,  
Մուրատատու սուրբ Կարապետ.

Ծառայ կընեմ Լըն:  
Քեօ չորս պիւրր չայիր չիման 11,  
Որ թուխ ամպեր կանգնած դուման 12,  
Խետ Քրիստոսին կանես դիւան,  
Դիւան արող սուրբ Կարապետ.  
Ծառայ կընեմ Լըն:

1) Փոռ. 2) Անողաց. 3) Բոլորը, շուրջ. 4) Հայ. 5) Յաւին, կսկիծին. 6) Հաւի,  
թոշոյ, գուցէ ասել կուզի տաճարի շինուածոյ համար սազաշէն. 7) Վերայ. 8) Սարսին,  
դրդան ի քէն, քեզ կան ի սպասու: 9) Գուցէ տեղոյ անուն լինի. 10) Նախապաշա-  
րումն է առհասարակ Հայ ռամկաց մէջ, որ կաղ դիւ մի ամեն օր կուգայ եւ սուրբ Կա-  
րապետի վանքի փառատան մոխիրը կժողովէ կտանի թափելու. ամեն մէկ պարզամիտ ուխ-  
տաւորէ լսած եմք, որ իբր թէ ինքն իսկ երկար ժամանակ այն տեղ մնալով, բնաւ չէ  
տեսած իշեալ « օջախի » մէջ մոխիր. խաբեայ շահասիրութիւնն եւ անարար խորա-  
մանկութիւնն մեր շատ վանքերը գրեթէ այսպիսի հրաշքներով կկառավարեն. 11) Սէզ,  
մարգագտին. 12) Մէզ, մառախուղ:

Սուրբ Կարապետ պանծրիկ պիւլոր,  
 Քեօ ճամբիւններ ուլոր մուլոր 1,  
 Կիւզան քեօ դուռ շատ ըխտաւոր,  
 Շատ ձիււոր քիչ ոտաւոր,  
 Մուրատ կիտէր ոտաւորին,  
 Զուլդար 2 կիտէր ձիււորին,  
 Մուրատատու սուրբ Կարապետ.

Ծառայ կընեմ և ըն:

Մարմար քեարիւր քեօ պատաններ 3  
 Սատաֆէ էրաւ տաճարի դուռ,  
 Զորս կողմ խաչ էր լալու դուռ,  
 Ուխտացողաց մուրատն ետուր,  
 Մուրատատու սուրբ Կարապետ.

Ծառայ կընեմ և ըն:

Քե շինած են Մշու ծմին 4,  
 Կիւզան քեօ դուռ աշխարհ զըմէն 5,  
 Մուրատ կառնեն գերեզմինէն,  
 Մուրատատու սուրբ Կարապետ.

Ծառայ կընեմ և ըն:

Քեօ գմբէթներ գուշա գուշա 6,  
 Քեօ ճամբիւններ վարդի փուշ ա,  
 Գերեզմին խոտն անոշ ա,  
 Մուրատատու սուրբ Կարապետ.

Ծառայ կընեմ և ըն:

Աղջիկ ըմկէր 7 Ստամբոլա քաղաք անուն Շուշան,  
 Ոստաֆէ դուռ ճամբիւնց գերեզմին նշան,  
 Կիւզան քեօ դուռ վեղիր փաշայ,  
 Գերեզմին խոտն անոշ ա,  
 Մուրատատու սուրբ Կարապետ.

Ծառայ կընեմ և ըն:

Քեօ քարեր տաշած քիւլինկով,  
 Ոսկի բուրվառ, անոշ խնկով,

1) Մանուածոյ, պատուաւոր. 2) Պատասխան. 3) Պարիսպներ. 4) Գուցէ ծմակն է.  
 5) Ամենայն, բովանդակ. 6) Զոյգ զոյգ. 7) Կայր:

Կիւզամ քեօ դուռ լալով ծնգով,  
 Մուրատատու սուրբ Կարապետ.

Ծառայ կընեմ և ըն:

Սուրբ Կարապետ զխտացին  
 Կայսարու քաղքէն խանեցին  
 Մարմին որ դաթրին 1 բարձեցին,  
 Մշու սարի մէջ թաղեցին,  
 Մշու Սուլթան սուրբ Կարապետ,  
 Մուրատատու սուրբ Կարապետ.

Ծառայ կընեմ քեօ շնորհքին,

Զօրքէ էլ շատ է սուրբ Կարապետին

Մուրատատու սուրբ Կարապետ:

Գ.

Քարոզ Խաչ

Մէկ շարաթ օր լոյս կիրակին  
 Խոտղներ 2 ժողովան կօ գնացին.  
 Գնացին խասան մըջ էն գաշտին,  
 Մէկ պօղէ 3 խաչ մ' էլ շինեցին,  
 Զորս գլոխ խնձոր զարկեցին,  
 Գիչի թաւով 4 փաթուժեցին  
 Քօջ 5 մ' էլ քօջան մէկ մէկ բերան Տէր ողորմեա կանչեցին.  
 Յերկնուց մասունք մէջ իջուցին,

Ծառայ կընեմ սուրբ Քարոզ Խաչին:

Խարար տարան մեծ քաշանին,  
 Էտենց բան մի էլէլ մեր խայոց Ազգին,  
 Գնանք պիրենք գնենք մըջ մեր Տաճարին,  
 Յերեկ խով կրանի վեր մեր զեղին,  
 Գիշեր լոյս կիտայ մեր տաճարին.

Ծառայ կընեմ և ըն:

1) Զորոյն. 2) Մշակներ, տաւարապանք. 3) Բոխի կամ պողի, բոյս, որ Հայոց պա-  
 ճոց սովորական կերակուրն է. 4) Գուցէ զարծեալ անուն բուսոյ. 5) Զու:

Մեծ քահանէն վերցեց սարկաւազ գնաց դէմ Գարող Խաչին,  
Գարող Խաչ թուաւ էկաւ ձեռ քահանին,  
Պագնեց դրեց վըր ուր գլխին.

Ծառայ կընեմ և ըն:

Մէ քառսուռն տարուան շուն գզիր կէր մըջ էն գեղին,  
Խաբար տարաւ Գիւրդ պարոնին,

Մէ խաչ իլեր խայրց ազգին,

Էն չի բարաթ 1 Խայրց ազգին,

Էն բարաթի քեօ դիւանին,

Յերեկ խով կրունի վըր քեօ բերդին,

Գիշեր լոյս կիտայ քեօ դիւանին.

Ծառայ կընեմ և ըն:

Գիւրդ պարոն էլաւ ճամբիսեց Մահմատ, ճամբիսեց Ալին,

Գնացին խասան տուռ գեղի ուէսին 2,

Աստուած օրհնի էն գեղի ուէսին,

Ասաց առէք ձեր սուլբրի գին

Դարձէք գնացէք վըր ձեր խետին 3,

Էն բարաթ չի Գիւրդ պարոնին,

Էն բարաթ ի Խայրց ազգին.

Ծառայ կընեմ և ըն:

Առեց Մահմատ, չառեց Ալին

Գնացին խասան դուռ լուսրարին,

Թափկով 4 զարկին էն լուսրարին.

Կատղաւ Ալին, կատղաւ ուր ձին,

Ատամ էրաւ թևի կաշին.

Ծառայ կընեմ և ըն:

Խաբար տարան Գիւրդ պարոնին,

Կատղաւ Ալի, կատղաւ ուր ձին,

Ատամ էրաւ թևի կաշին.

Ծառայ կընեմ և ըն:

Գիւրդ պարոն էլաւ կանգնաւ վըր ուր բերդի բաղանին,

Կանչ մ' էլ կանչեց վըր շհարին 5,

1) Վայել, պատշաճ. 2) Տանուտէր, կառավարիչ դիւղի. 3) Հետոց, ընդ հետո:  
4) Արացի. 5) Քաղարին:

Յչէք ղոշուն 1 կապէք գնացէք դէմ Գարող Խաչին.

Գնացին խասան մըջ էն դաշտին,

Յառջինն դարձաւ վըր յետինին,

Յետինն դարձաւ վըր յառջինին,

Էն ղոշունին բմբռ 2 բերին.

Ծառայ կընեմ և ըն:

Խաբար տարան Գիւրդ պարոնին,

Գեօ ղոշուն գնացեր խասեր մըջ էն դաշտին,

Յառջինն դարձեր վըր յետինին,

Յետինն դարձեր վըր յառջինին,

Էն ղոշունի բմբռ բերին.

Ծառայ կընեմ և ըն:

Գիւրդ պարոնի բերդ կատղաւ վըր ուր խմին 3,

Գիւրդ պարոն կատղեր մըջ ուր բերդին,

2ին էլ կատղեր մըջ ուր թաւլին 4,

Տղան կատղեր օրօրոցին,

Օղլուշաղ 5 կատղեր մըջ ուր օթխին 6,

Կաթն ի կատղեր մըջ ղաղանին.

Ծառայ կընեմ և ըն:

Քառասուն կուռան զոմէշ ունիմ՝ էն էլ մատաղ Գարող Խաչին:

Քառասուն անծին էրինջ ունիմ՝ էն էլ մատաղ Գարող Խաչին:

Քառասուն անծին շիշակ 7 ունեմ՝ էն էլ մատաղ Գարող Խաչին:

Քառասուն դիւզիւմ 8 ոսկի ունիմ՝ էն էլ խոստում Գարող Խաչին:

Իմ բերդ կանգնի վըր ուր խրմին,

Տղէն կանգնի օրօրոցին,

Գիւրդ պարոն կանգնի մըջ ուր բերդին,

Օղլուշաղ կանգնի մըջ օթխին,

2ին էլ կանգնի մըջ ուր թաւլին,

Կաթն էլ կանգնի մըջ ղաղանին.

Ծառայ կընեմ և ըն:

1) Զօրք, զունդ. 2) Խիստ մեծ ջարդ տուին. 3) Իւր հիման վերայ. 4) Ախուկն,  
5) Կին, ընտանիք. 6) Սենեկին. 7) Երեքամեայ էգ ոչխար. 8) Անօթ պղծի:

Խաւան չեկաւ էն խոստումին,  
 Քիւրդ պարոնի բերդ տուեց էրան 1,  
 Աշխարհ թափան սէյրան 2,  
 Էն զզիր խիւրնդացաւ կեր ընկաւ գզրի բերան,  
 Մեռաւ տարան խորեցին ջամիգակ 3, շներ խանին տարան կերան.  
 Ծառայ կինեմ սուրբ Քարոզ Խաչին:

Գ.

Հ. Գ. Լ. Մ. Բ. Գ.

Խոզին մարմին էլան եղբար,  
 Խըտ մէկ մէկու են դոււարհար 4,  
 Խոզին մարմին կոտորտեցին,  
 Խոզին էլաւ խոռով կերթար:  
 Մարմինն ընկաւ ոտն ի լայրով,  
 Ասաց զիւ ուր կերթաս իմ մեծ եղբար,  
 Նոր եմ ընկե աստուորին 5,  
 Արի շինեմք Նիւշուն յօդա 6,  
 Արի շինենք մեծ դարգաբա 7,  
 Մտնեմք ի նե, կանեմք սաֆա 8,  
 Վերջ աշխարքը մեղ մեռնել կայ:  
 Խոզին ասաց անդէտ մարմին,  
 Անկաջ էրա իմ խրատին.  
 Վաղուան աւուր գատաստանին  
 Մեզ կթալեն խուր գեկեն կրակին,  
 Սուտ փուչ աշխարհքը ես ինչ անեմ:  
 Հրեշտակ եկեր, իմ մեռնելու Փարման 9 բերեր,  
 Տաւրան դունիէն 10 ձեռքէս տարեր.  
 Սուտ փուչ աշխարհք ես ինչ անեմ:  
 Հրեշտակ նստեր վըր իմ գլխուս,

1) Հիմնայատակ արար. 2) Ի սես, ի դբօսանս. 3) Գի. 4) Հակառակորդ, թշնամի.  
 5) Աշխարհ, կենդան. 6) Սննեակ. 7) Պալատ, փառաւոր ընկալարան. 8) Հրճուանք,  
 ուրախութիւն. 9) Հրովարտակ, հրաման. 10) Կեանք, աշխարհ:

Փակեր բերանս, բռներ լեզուս,  
 Քաղեր ի զիմ աչքերաց լոյս,  
 Խէր մեր ախպէր ես ինչ անեմ:  
 Ժողովան պիւրը դուր ու զրկեց,  
 Գաբրիէլ հրեշտակ լեզուս փակեց.  
 Զիս աստուորէս ջոկեց,  
 Խէր մեր ախպէր ես ինչ անեմ:  
 Սօրուտ որ էլամ աշխարհք սիրեցիմ,  
 Ծանտը առիմ, թեթեւ ծախեցիմ,  
 Աստուած վրէս բարկըցուցիմ,  
 Վայ դայ ձի պէս մեղաւորին,  
 Սուտ փուչ աշխարհք ես ինչ անեմ.  
 Աստուորի բաներն ասեմ անկաջ էրէք,  
 Աստուորի մալին 1 թամահ 2 մի անէք.  
 Գիշեր ցերեկ աղօթք անէք,  
 Ձեր խեղճ խոզին ձեր միտ բերէք.  
 Դատաստանին չք շեւարէք,  
 Խէր մեր ախպէր ես ինչ անեմ:  
 Մեր տէր նստեր վըր թուխ մապին,  
 Հրաման կանէ Գաբրիէլ հրեշտակին,  
 Փողեր փչէք ամենեւին.  
 Ամեն խոզի երթայ կանգնի վըր իւր մարմնին,  
 Ամեն խոզին գնաց կանգնաւ վըր իւր մարմնին.  
 Ինչ որ մեղաւորն էր, ձեռ ծոց, ափ երեսին,  
 Ասաց զիւ վեր էլի դարչելի մարմին,  
 Այս քեօ տեղաց, ամուր աղքատին չտուիր կտոր մը հաց,  
 Զիս սեցուցիր մըջ էն մեղաց,  
 Դատաստանին մէկ ճար ըմ՝ ձի 3:  
 Ինչ որ արդար խոզին էր,  
 Ուրախելին գնաց վըր ուր մարմնին,  
 Ասաց զիւ վեր ելի ախպէր մարմին,  
 Գիւ շատ տուրս ողորմութիւն տուիր ամուր աղքատին,

1) Գոյրին. 2) Յանկութիւն, փափագ. 3) Ինծ:

Զիս պայծառ պախիր մըջ աշխարքին,  
 Էլի գնանք դատաստան Տէր ստեղծողին,  
 Մեղք ու վարձքը կկշռին,  
 Կնացին դատաստան Տէր ստեղծողին,  
 Ինչ որ արդարն էր, չոքեց, թաղիմ՝ 1 էրաց  
 Չեռ Պօղոս Պետրոսին,  
 Ինչ որ մեղաւորն էր, ասաց գնացէք  
 Զուր հուր յախտնին.  
 Չեր մէկն էլ չեմ՝ ճանաչէ ամենկին,  
 Ին վախն էլ կանչեցին ո՞վ Տիրամայր Աստուածածին,  
 Չկուրուսանես զքո ստեղծուած խոզին,  
 Տանջանք շատ էր մեղաւորին:

Ե.

Յօրօվանա յօրօվանա 2,  
 Յօրօվանա զիւր տուն քանդեց,  
 Էկաւ գեարուն կորեկ ցանեց,  
 Կիտու թրթուր քեօքէն խանեց.  
 Կարընա նանայ նանընայ քեթուռ,  
 Զանընա նանայ կանաչ թրթուր:  
 Մեռնեմ՝ քեղի սուրբ Յովհաննէս (Իրիւնէ).  
 Մատաղ կանեմ՝ կապուլ 3 էնէս,  
 Կիտու թրթուր քեօքէն խանես.  
 Էս քե մեռնեմ՝ սուրբ Յովհաննէս.  
 Կարընա նանայ նանընայ քեթուռ,  
 Զանընա նանայ կանաչ թրթուր:  
 Մարկոս դնաց յօղի 4 դիւան (Իրիւնէ).  
 Խաց մ՝ էլ չկէր որ փրթէ թան,  
 Տանընա նանայ նանընայ քեթուռ  
 Երեք արտէն քիլէ 5 մը կտուր:

1) Գանձուումն, աւանդումն. 2) Անձանօթ բառ, գուցէ յատուկ անուն. 3) Ընդունելի.  
 4) Գոմի միջի սենեակ, որ կատուի սարու. 5) Զափ ցորենուց, գրուած:

Ես քե մեռնեմ՝ սքանչելագործ (Իրիւնէ)  
 Կիտու թրթուր աունես քեօ ծոց,  
 Տանես թափես էնա փողոց,  
 Էս օխտ տարի մեր սիրտը էր խոց.  
 Կարընա նանայ նանընայ քեթուռ  
 Զանընա նանայ կանաչ թրթուր:

Զ.

Թագաւորի երգը:

Մեր թագաւորին ի՞նչ կու պիտէր 1,  
 Սուրբ Երրորդութիւն յաջմէ կայնէր,  
 Որ թագին շուռ գեր շօռէմօռ 2,  
 Բարով յիւր տուն գէր:  
 Մեր թագաւորին ի՞նչ կու պիտէր.  
 Ծառ խնկեկին որ ծաղիկ էր,  
 Ծաղիկ քեօ յարե նման էր.  
 Որ թագին Ելն:  
 Մեր թագաւորին ի՞նչ կու պիտէր.  
 Լոյս գերեզման յաջմէ կայնէր.  
 Որ թագին Ելն:  
 Մեր թագաւորին ի՞նչ կու պիտէր.  
 Սուրբ Կարապետ յաջմէ կայնէր.  
 Որ թագին Ելն:  
 Մեր թագաւորին ի՞նչ կու պիտէր.  
 Թագաւորի մեր կայնած պիտէր.  
 Որ թագին Ելն:  
 Մեր թագաւորին ի՞նչ կու պիտէր.  
 Թագաւորի խէր կայնած պիտէր.  
 Որ թագին Ելն:

1) Փեսայն զգեցուցած ժամանակը կկայեն եւ ուրցը, որ է գանազան զոյնզոյն  
 թելերէ եւ մրգեղէններէ հիւտուած զնգամու զարդ մի, որ պիտի պահուի փեսայի կող-  
 քին. սորա հիւսելու ժամանակը կսան այս երգը: 2) Անձանօթ:

Մեր թագաւորին ի՞նչ կու պիտէր.  
Թագաւորի սանամէր կայնած պիտէր.

Որ թագին և լին:

Մեր թագաւորին ի՞նչ կու պիտէր.  
Թագաւորի քոյր կայնած պիտէր.

Որ թագին և լին:



Է.

Հարսի երգը 1.

Խարս վեր արի նազ մի անն 2,  
Փեշերդ տուր վեր թող մ' անն.

Խարս վեր արի քեօ թախտէն 3,  
Գանդեատ մ' անն քեօ բաղտէն.

Խարս վեր արի քեօ յօղից 4,  
Գանդեատ մ' անն քեօ բաղտից:



Ը.

Թագաւորի մօր դէմ.

Դիւս արի հայ դիւս արի,  
Թագաւորի մէր դիւս արի 3.

Քե ջիւր պերող եմ պերն,

Դիւս արի հայ դիւս արի,

Թագաւորի մէր դիւս արի:

Քե խաց տանող եմ պերն.

Դիւս արի հայ դիւս արի,

Թագաւորի մէր դիւս արի:

Քե ձաւրի ծեծող եմ պերն,

1) Երբ որ պիտի հարսը զգեցուցած հայրենի տանէն հանն եւ փեսայի հետ յեկեղեցի ածեն արակելու, կտուն այս երգը դրան առաջին: 2) Մի ցոյց տար զքեզ իբրեւ թէ վիամիս: 3) Գահից: 4) Այս տեղ կնշանակէ սենեակ: 5) Երբ որ հարսը ու փեսայն եկեղեցիէն կդարձնեն սկեսրարի տուէր, դրան առաջ կանգնեցուցած ի դէմս մօր փեսայի կասեն այս երգը. երգէն յետոյ սկեսուրը պիտի տանէն զուրս զայ եւ զըրկածէ հարսին:

Դիւս արի հայ դիւս արի,  
Թագաւորի մէր դիւս արի:

Քե զլօթ զըմփող եմ պերն,

Դիւս արի հայ դիւս արի,

Թագաւորի մէր դիւս արի:

Քե խօր քաշօղ 2 եմ պերն,

Դիւս արի հայ դիւս արի,

Թագաւորի մէր դիւս արի:

Քե խաց թխող եմ պերն,

Դիւս արի հայ դիւս արի,

Թագաւորի մէր դիւս արի:

Քե կերակուր էփող եմ պերն,

Դիւս արի հայ դիւս արի,

Թագաւորի մէր դիւս արի:

Քե զարաւաշ 3 եմ պերն,

Դիւս արի հայ դիւս արի,

Թագաւորի մէր դիւս արի:

Քե տախտ աւլող եմ պերն,

Դիւս արի հայ դիւս արի,

Թագաւորի մէր դիւս արի:



Թ.

Դեբէկօ.

Դիւլդա օլղուճ սարի տէր (չեկէ),  
Դեալան գետան ևարի տէր,  
Եաման ևաման զերիկօ,  
Շիվան հաթի բերիկօ,  
Յակօն սպանած զեաղիկօ,

1) Եսծող: 2) Հօր հայհոյող: —Երգիս մէջ կյիշուին այն պաշտօնները, որ հարսի մի պարտքն է, ջուր բերել, երկրագործ աշխատաւորին հաց տանել, հաց թխել, ծաւար ծեծել եւլն. իսկ իբրեւ կատակ իւր սկեսուրի զխին զարկող եւ հայհոյող հարսի մի բերուիլն: 3) Աղախին:

1728

Դաստ ալեթի մամիկօ,  
Տայէ րապէ պապիկօ 1:

Ճրագ մը ձէթ վառեցի,  
Ղուծնի 2 իշլիկ 3 կարեցի,  
Տարայ օթախ խակիւցի (իւնէ),  
Թուխ թուխ պեխեր սանդրեցի,

Բալաք 4 աչքեր դեղեցի,  
Սպտակ քեօլօղ 5 դրեցի (իւնէ),  
Եազմա 6 եայլըս կապեցի,

Խրեղէն ձինը խեծուցի,  
Դիւքան բազար ճամրխեցի (իւնէ),  
Եաման եաման դերիկօ Լըն:

Յակօն իլեր կերթայ բազար (իւնէ),  
Գուձէլ առջև խարիր խազար,  
Քեօ տուն չաւրի, սօ Ղազար,  
Ընչի թօրկիր Յակօն էզար.  
Եաման եաման դերիկօ Լըն:

Վեմայ 7 վերև աղբիւր մի կեր,  
Յակօյի աչքեր սև ջուր իկեր,  
Յակօն յառուն թոնր ի,  
Մատօն փեշէն բոններ ի.  
Քեատօն խանչար 8 զարկեր ի.  
Եաման եաման դերիկօ Լըն:

Դէրիկ սաշիլ իլանդր,  
Սալ բոյնրմա դօլանդր.  
Եաման եաման դերիկօ Լըն:

Վեմայ վերև Աստուածաշէն,  
Մալուլ 9 կէներ էն փաշէն,

1) Ամբողջ տունը քրտերէն է, եւ ցոյց կտայ Յակօյի սպանուիլն ու հօր եւ մօր օգաւոր եւ անմխիթար մնալն. տխուր երգ մի է այս, կակնարկէ Յակօ անուն կարիչ եւ զեղեցիկ երիտասարդի մի սպանուիլն Քեադօ անուն քրտէն. երգի երկրորդ տունը նորա կնոջ բերնէն է ասուած. 2) Տեսակ հանդերձի. 3) Բաճկոն կամ արխալուղ. 4) Սպիտակ ու սեւ. 5) Թաղիրի զլխարկ քրդիտանի. 6) Գոյնզոյն մետաքսայ թաշկինակ. 7) Անուն տեղւոյ. 8) Գաշոյն. 9) Տխուր, շիւար:

Արուն կաթէր Յակօյի նաշէն,  
Թիմար աւրաւ մնաց Գրլաշէն.  
Եաման եաման դերիկօ Լըն:

Յակօն կանգներ ի կարմնջին,  
Ռսկի գնդեր ախջին,  
Փաթութեր ի ուր եախնջին 1,  
Խանչար զարկած ապի 2 խարջին 3:  
Եաման եաման դերիկօ Լըն:

Վեմայ վերև չիման էր,  
Քեադօն Յակօ կապանէր,  
Քիլամ 4 ցորեն կկամանէր,  
Պձեղ մը սոխ կկամանէր,  
Քեադօ Յակօն չապանէր.  
Եաման եաման դերիկօ Լըն:

Վեմայ երես խոլ երես,  
Քեադօ քեօ Աստուած կսիրես,  
Վասն Յակօն սպաներ ես.  
Եաման եաման դերիկօ Լըն:

Վեմայ վերև չատր 5 էր,  
Յակօի ջալլաթ 6 հազը 7 էր.  
Եաման եաման դերիկօ Լըն:

Խարար 8 տարէք հարին մարին,  
Յակօ սպանած Վեմայ սարին,  
Գոոց ընկեր Վանայ քեարին.  
Խարար տարէք գեղի ուէսին,  
Թուղթ մ' ալ խրկէք կաթաղկոսին,  
Գողեր ճամրխու գնի շուտ կորուսին.  
Եաման եաման դերիկօ Լըն:

Պուլուտ պուլուտ ուստունա,  
Պուլուտ դաղըն գարջընա.  
Եաման եաման դերիկօ Լըն:



1) Տառասով. 2) Ասուի վերաբերու Քիւրդիտանի. 3) Ապի վերայ գտնուած զարդերին. 4) Չափ ցորենոյ. 5) Վրան. 6) Գանիծ. 7) Պատրաստ. 8) Լուր, ազդ:

Խարար գեթան անամայ,  
Խարար գեթան բապամայ,  
Զանմ բուրդա չուրութմիչ:

Յաման համան դերիկօ Լըն:

Խարար տարէք էն երիցուն,  
Աւրերի Յակոյի թաղայ տուն,  
Աոտրեր գերան մնացերի սուն:

Յաման համան դերիկօ Լըն:

Խարար տարէք Աւանայ փաշին,  
Ապի զլօն սև արաշին,  
Էլ չխասնի Յակօն նաշին 1:

Յաման համան դերիկօ Լըն:

Յակօն կըզեր սարերոց,  
Յակօյի դիւշման 2 քհարերոց,  
Յաման համան դերիկօ Լըն:

Խարար տարէք Ալմօյին,  
Զուղար տարէք Ալմօյին,  
Տուն աւրաւ Յակօյին:

Յաման համան դերիկօ Լըն:

Յակօ գիրդի բու բաղա,  
Զինի դայդի եարփաղա,  
Յաման համան դերիկօ Լըն:

~~~~~

Ժ.

Դարդիցս խարար տուր բարօ:

Աղջի արի՛ քե Փաս 3 առնեմ,  
Փասի պիւլըր ոսկի շարեմ:

— 2եմ ուզի դագօ 4, չեմ ուզի բարօ 3,

Դարդիցս խարար տուր բարօ:

1) Դագադին. 2) Թշնամի. 3) Գլխարկ աղջկան. 4) Քրտերէն - հայր. 5) Դարձեալ հայր:

Աղջի արի՛ դալմա 1 առնեմ,  
Դալմի պիւլըր սիւրմա 2 կարեմ.  
— 2եմ ուզի դագօ Լըն:

Աղջի արի՛ ճզմայ 3 առնեմ,  
Ճզմի տակեր նալա 4 զարկեմ.  
— 2եմ ուզի դագօ Լըն:

Աղջի արի՛ քե տամ շհար,  
— 2եմ ուզի դագօ Լըն:

Աղջի արի՛ քե տամ Հաւանց 5,  
— 2եմ ուզի դագօ Լըն:

Աղջի արի՛ քե տամ Հալիւր 6,  
— Խա բարօ ջան բարօ,  
Դարդիցս խարար տուր բարօ,  
Տրանանայ կօ ես էլ կերթամ,  
Տրանանայ օղորմի քեօ խօր 7:

~~~~~

ԺԱ.

Պատմ.

Պոստան 8 եմ դրե վերև էս տարին,  
Աստուած շէն պախի էս տարուան տարին,  
Շամամ ըմ 9 չէլաւ օրօխկեմ 10 եարին 11:

Արի եար արի, խոռվ մը կենայ,  
Աստուորիս մայ, ձի քե չմնայ:

Էրթանք Ստամբօլ,

Փող էլ պիրենք պօլ 12,  
Առնենք ջուխտմ սօլ 13,  
Խակնենք տօրվէ տօր 14:

1) Հանդերձ կանացի. 2) Մոփ, կամ այլ դարդ հանդերձի. 3) Սօլեր. 4) Երկաթնայ պայտ կրնկանց սօլերի. 5) Գիւլ մի. 6) Գիւլ մի: 7) Աղջիկը Հալիւր գիւղի մէջ սիրական ունենալով, կմերժէ հօր բոլոր առաջարկութիւնները եւ կղիջանի միայն ախորժ անունը լսելով: 8) Մրգաստան, սեխաստան. 9) Գնդածու փորթիկ սեխ հոտաւէտ. 10) Ուղարկեմ. 11) Սիրականին. 12) Շատ. 13) Սօլեր, ազանեւեր. 14) Փոխ առ փոխ:

Էրթանք պստի 1 զեղ,  
 Առնենք նուկի 2 մը եղ,  
 Էնենք ձուածեղ,  
 Տանենք խովուուն:  
 Խովիւ խոովաւ,  
 Ոչխար մոյրրաւ,  
 Կթոց զլորվաւ,  
 Պէրվոր 5 շիւարաւ:

~~~~~  
 ԺԲ.

Աղջիկ էար անենտ, էար անենտ.  
 Դելբար էար անենտ, էար անենտ.

Դու կայնիր ես աղբրան ախան,  
 Փէլքդ 4 կտայ արեգական,  
 Կարմիր երեսք արուն կաթան.  
 Աղջիկ եար անենք, եար անենք,  
 Եարալու 5 սրտիս ճար անենք:  
 Դու էլել ես կայնել ես դուռ,  
 Մէլքդ բարակ խանչալի բուռ,  
 Քօ խօրն ու մօր աչքերն եկուր,  
 Տղէն տեսաւ, աղջիկն ետուր.  
 Աղջիկ եար անենք ևլն:  
 Զուրը կերթաս երիշ 6 կանես,  
 Մաչրամիդ 7 տուտը քաշ կանես,  
 Դու ինձ հալ ու մաշ կանես.  
 Աղջիկ եար անենք ևլն:  
 Զուրը կերթաս ջուխտ զորակով 8,  
 Սիրտս կերես բոց կրակով:

1) Փորր. 2) Չափ հեղանիթոց. 3) Ոչխար կթող. 4) Փայլ, շող. 5) Վիրուոր.  
 6) Քայլ, ընթացք. 7) Քօղ, տեռ. 8) Անօթ ջրոյ կէս սափորոյ չափ:

Քեզի փախցում ալ 1 քուռակով 2,  
 Աղջիկ եար անենք ևլն:  
 Դու էլել ես կերթաս մարագ,  
 Վիդդ երկէն մէջքդ բարակ,  
 Ինչ որ խաքնես քե մունքարագ 3.  
 Աղջիկ եար անենք ևլն:  
 Դու էլել ես կերթաս ածուն,  
 Սայէդ 4 սիպտակ ինչ որ մածուն,  
 Աչքով կանես շէկիկ լաճուն 5.  
 Աղջիկ եար անենք ևլն:  
 Դու էլել ես կերթաս յիգին 6,  
 Դու ու քո ջուխտակ տէգերկին,  
 Կշորորաք 7 ինչուր մաքին.  
 Աղջիկ եար անենք ևլն:  
 Դու ուստ կգաս, էն խնրսա 8,  
 Խէրով եկար, բարով տեսայ.  
 Արի նստենք, մանդր զսա 9,  
 Քոշքը՛ 10 մանենք խասար 11,  
 Կուզին խարիր, կուտամ խազար,  
 Բարով եղնեմ քօ խոր փեսայ.  
 Աղջիկ եար անենք ևլն:

~~~~~  
 ԺԳ.

Բաղնի ջան բաղնի:

Քեզի կասն ուսի խարս,  
 Բաղնի ջան բաղնի:  
 Կարմիր երես արուն կաթաս,  
 Բաղնի ջան բաղնի:

1) Կարմիր. 2) Մտրուկ. 3) Արժան եւ վայել. 4) Գուցէ լանջ. 5) Տղային.  
 6) Այգին. 7) Սիգանեմ կընթանար. 8) Խօսէ. 9) Զրոյց. 10) Բուրգն, ամաքանոց.  
 11) Պարիսպ:

Պագիկ մը տուր տամ զօլաթա 1;  
 Բաղնի ջան բաղնի,  
 Գու ման կգաս կտրներին,  
 Բաղնի ջան բաղնի,  
 Սաղըի 2 սօլեր կրնկներին,  
 Բաղնի ջան բաղնի,  
 Գիւլաբաթին 3 պունկներին,  
 Բաղնի ջան բաղնի,  
 Էլայ տանիս թափ քէլեցի,  
 Բաղնի ջան բաղնի,  
 Լանկուլ տուի երդիս բացի,  
 Բաղնի ջան բաղնի,  
 Պարմիր խնձոր գլորեցի,  
 Բաղնի ջան բաղնի,  
 Աամար տուն չէր նստայ լացի,  
 Բաղնի ջան բաղնի: 3



Ժ.Դ.

Չօմ շօմ.

Չինչ ու զինչ տամ լողվորչուն,  
 Չօմա զօմա էր,  
 Չիմ լաճն տամ լողվորչուն,  
 Քեօմա քեօմա էր,  
 Ոչ էառ ոչ խաւնեցաւ,  
 Չօմա զօմա էր,  
 Ոչ էխան Ծամկալ ծովէն,  
 Քեօմա քեօմա էր,  
 Չինչ ու զինչ տամ լողվորչուն,  
 Չօմա զօմա էր,

1) Դրամի անուն: 2) Տեսակ մի սօլերի: 3) Ոսկեթիւ:

Չիմ շապիկ տամ լողվորչուն,  
 Քեօմա քեօմա էր,  
 Ոչ էառ ոչ խաւնեցաւ,  
 Չօմա զօմա էր,  
 Ոչ էխան ծամկալ ծովէն,  
 Քեօմա քեօմա էր,  
 Չինչ ու զինչ տամ լողվորչուն,  
 Չօմա զօմա էր,  
 Չիմ մէջկապ տամ լողվորչուն,  
 Քեօմա քեօմա էր,  
 Ոչ էառ ոչ խաւնեցաւ,  
 Չօմա զօմա էր,  
 Ոչ էխան ծամկալ ծովէն,  
 Քեօմա քեօմա էր,  
 Չինչ ու զինչ տամ լողվորչուն,  
 Չօմա զօմա էր,  
 Իմ մէջքէս վեր տամ լողվորչուն,  
 Քեօմա քեօմա էր,  
 Ոչ էառ ոչ խաւնեցաւ,  
 Չօմա զօմա էր,  
 Ոչ էխան ծամկալ ծովէն,  
 Քեօմա քեօմա էր,  
 Չինչ ու զինչ տամ լողվորչուն,  
 Չօմա զօմա էր,  
 Լուսնիակ զիշեր պազ մի տուի,  
 Քեօմա քեօմա էր,  
 Խետ առեց, խետ խաւնեցաւ,  
 Չօմա զօմա էր,  
 Խետ էխան ծամկալ ծովէն,  
 Քեօմա քեօմա էր,



ԺԵ.

Տօ գէշ կնիկ քեօ խէր խորեմ,

Թոնդիր կվառես ծուխ մուխ կէնես,  
Նշխուն 1 պատեր պլպուլ 2 կէնես,  
Մեր պատերն ի նիշուն պատեր:

Տօ մուխ էր մարդ քեօշին 3 էնեմ,  
Քե կօրօխկեմ զիւ քեաղ էնես,  
Մանգաղ կթալես անկաջ կէնես,  
Արեգական ձեռնով կէնես:

Տօ գէշ կնիկ քեօ խէր խորեմ,  
Կերթաս զոներ անկաջ կէնես:

Տօ մուխ էր մարդ քեօ շին էնեմ,  
Քե կօրօխկեմ զութնի պիրես,  
Դիւ կմորրուես չիթ կպիրես:

Տօ մուխ էր մարդ քեօ շին էնեմ:

Տօ գէշ կնիկ քեօ խէր խորեմ,  
Քե կօրօխկեմ զիւ թան պիրես,  
Կմորրուես մածուն կպիրես:

Տօ գէշ կնիկ քեօ խէր խորեմ:

ԺԶ.

Ջանիման ջանիման.

Ջանիման ջանիման.

Տուն եմ շինէ գետու բերան.

Ջանիման ջանիման:

Թալցիմք ի նե ջուխարմ գերան,

Ջանիման ջանիման:

1) Զարգարուն, զեղեցիկ. 2) Սեւացած, աղտոյի. 3) Սուգ

Մէկն էր խօխի 1 մէկն էր ծիրան,  
Ջանիման ջանիման:

Կոտրաւ խօխին մնաց ծիրան,  
Ջանիման ջանիման:

Կատուն նստե վըր տախտկին,  
Ջանիման ջանիման:

Պոշն էր պարզէ զըն տանտրկին,  
Ջանիման ջանիման:

Քեաւորներ խրկեր եմ էրթան քեաղ էնես,  
Ջանիման ջանիման:

Խաց էլ չկէր օրօխկեմ ուտեն,  
Ջանիման ջանիման:

Աստուած արէր ըս տարուան տարին,  
Ջանիման ջանիման:

Քեաղւորներ անօթի կկոտորուեն,  
Ջանիման ջանիման:

ԺԷ.

Էս օր աշուն ի Մայրամ,

Եաղմէն նիշուն ի Մայրամ:

Իմ ջան քեօ ջանին հայրան:

Սեփանի տուն շիշերով,

Մայրամ փախաւ զիշերով.

Վայ Մայրամ, Մայրամ, Մայրամ,

Իմ ջան քեօ ջանին հայրան:

Կէս զիշերին թաթ կանես 2,

Եարերաց աչքով կէնես.

Վայ Մայրամ, Մայրամ, Մայրամ,

Իմ ջան քեօ ջանին հայրան:

Արտաշարայ կնտկներ,

Կարթան խանին պիւնկըներ 3.

1) Անուն ծառայ. 2) Գուրգայ կղործես. 3) Սակաւներ:

Տարան տուին տան մներ 1,

Զարկին տարան կռկներ 2.

Վայ Մայրամ, Մայրամ, Մայրամ,

Իմ ջան քեռ ջանին հայրամ.

Երեք չամիչ տուեցիմ,

Երեք պագ էլ առեցիմ.

Վայ Մայրամ, Մայրամ, Մայրամ,

Իմ ջան քեռ ջանին հայրան.

Մայրամ յառուն թռեր ի,

Տերտերը փեղէն բռներ ի,

Ճանկըմ չամիչ տուեր ի.

Տասուերկու . . առեր ի.

Վայ Մայրամ, Մայրամ, Մայրամ,

Իմ ջան քեռ ջանին հայրան.

Մայրամ էրաւ նխշերով,

Մշակ փախաւ գիշերով.

Վայ Մայրամ, Մայրամ, Մայրամ,

Իմ ջան քեռ ջանին հայրան.

ԺԸ.

Լալալալալա.

Էրթանք յերէրին 5 Լալուխան 4.

Ոչխար վըր բերին Լալուխան.

Կթի թուխ մարին Լալուխան.

Լցիւր սուրաւնն 5 Լալուխան.

Բառնայ թուխ եղանց Լալուխան.

Առնի խարազան Լալուխան.

Քշի թըխ չոջան 6 Լալուխան.

Տանի խիւրնդին Լալուխան.

1) Տանիք, կտուրներ. 2) Ազուաներ. 3) Առանձին տեղ. 4) Անուն աղջկան. 5) Տիկ. 6) Ամբարնոց բառ Քրդ:

Խիւանդ խոովեր Լալուխան.

Տաննք խովի ուն Լալուխան.

Խովիւ խոովեր Լալուխան.

Ոչխար մալուլեր Լալուխան.

Կթոց զըրուեր Լալուխան.

Մեր բակ կտաւատ Լալուխան.

Չեր բակ կտաւատ Լալուխան.

Պագնեմ քեռ խաւատ Լալուխան.

Մեր բակն ի խորը Լալուխան.

Չեր բակն ի խորը Լալուխան.

Քեռ եարն էլ կորի Լալուխան.

Բորիկ մը քելի Լալուխան.

Տոտիկդ 1 փուշ կենի Լալուխան.

ԺԹ.

Արի եար արի, իւրով մի մնայ,

Աստուորիս մալ մեղի չմնայ.

Բաժն 2 ի բարակ ծովէն քեռաշած,

Քեռ ըղընկներ ըռընտով 5 տաշած,

Ես քեռ սիրուն խալած մաշած.

Արի եար արի, խոով մի մնայ,

Աստուորիս մալ մեղի չմնայ.

Դիւ ելեր ես կերթաւ գոմեր,

Ինչ քեռ շուշէք ինչ քեռ մամեր,

Սիրիւր եմ չեմ կարնայ գոմեր 4.

Արի եար արի, ելն:

Դիւ ելեր ես կայներ ես տուռ,

Քեռ մէջք զարկիր ես ջուխտմ նուռ,

Աստուած սիրես ձի պագըմ տուր.

Արի եար արի, ելն:

1) Ոտդ. 2) Իրան, մէջք. 3) Գործի հիւսան. 4) Ուրանայ, յետս կայ:

Դիլի 1 չոխ 2 սուր, Հալապ սանի 5,  
 Խօրօտ 4 կուժին խելք կուտանի,  
 Բալաք 3 աչքեր մարդ կուսպանի,  
 Արի եար արի և շն,  
 Լխացէ ջախրայ կմանես,  
 Դիւ սալամ 6 կարաւ նմանես,  
 Դառ չխօսամ կլնես կայնես,  
 Արի եար արի և շն,  
 Քե կկշռեմ խետ կածմ ապրուշու 7 մանծին ես,  
 Դատաստանին իմ բաժին ես,  
 Արի եար արի և շն,  
 Դիւ ելեր ես կերթաս մարագ,  
 Քիւ ուտելուն մեղը ու կարագ,  
 Խակնեղուն քե բուն բարագ,  
 Արի եար արի և շն,  
 Մեր տուն ձեր տուն եանա եանա 8,  
 Քեօ մօր ասա թող դուռ բանա,  
 Մեզի մաջին 9 որ դիւշմանա,  
 Տարին պիւրոյ խեանդանայ,  
 Արի եար արի, խոռով մի մնայ  
 Աստուորիս մալ մեզի չմնայ,



Ի.

Աղջիկ նազերով նազերով,  
 Դիլբար նազերով նազերով,  
 Աղջիկ մի գար մեր կալերով,  
 Դիլբար մի գար մեր կալերով,  
 Դիլբարի ձին էր նալերով,  
 Աղջիկ մի գար մեր կալերով,  
 Աղջիկ մի գար մեր տուն ծուխ ի,

1) Լեզու. 2) Շատ. 3) . . . 4) Սիրուն, քնաղ. 5) Սպիտակ եւ թոխ.  
 6) Տեսակ մի կարաւի. 7) Մետաքսեայ. 8) Քով ի քով: 9) Միջին:

Դիլբար մի գար մեր տուն ծուխ ի.  
 Աարմիր երես աչքեր թուխ ի.  
 Արի երթանք Հորդկա խոտիկ 1,  
 Դիլբար երթանք Հորդկա խոտիկ,  
 Տեսնենք վեր եարնա խօրտիկ.



ԻԱ.

Էս օր ուրբաթ ի պաս ի,  
 Դէ՛՛՛՛՛ զընկ զընկ, դէ՛՛՛՛՛ ջան.  
 Սրտիկ արծըթի թաս ի,  
 Դէ՛՛՛՛՛ զընկ զընկ, դէ՛՛՛՛՛ ջան.  
 Սրտիկ մալուլ մը կենայ,  
 Դէ՛՛՛՛՛ զընկ զընկ, դէ՛՛՛՛՛ ջան.  
 Աշխարհքը մարդի չի մնայ,  
 Դէ՛՛՛՛՛ զընկ զընկ, դէ՛՛՛՛՛ ջան.  
 Սրտիկ սինի սնտուկ էր,  
 Դէ՛՛՛՛՛ զընկ զընկ, դէ՛՛՛՛՛ ջան.  
 Ատարաւ էն սինի սնտուկ,  
 Դէ՛՛՛՛՛ զընկ զընկ, դէ՛՛՛՛՛ ջան.  
 Թռաւ էն կարիպ 2 ճնճղուկ,  
 Դէ՛՛՛՛՛ զընկ զընկ, դէ՛՛՛՛՛ ջան.  
 Թռաւ պանծրիկ սար էլաւ,  
 Դէ՛՛՛՛՛ զընկ զընկ, դէ՛՛՛՛՛ ջան.  
 Տընեմ 3 պանծրիկ սարերաց,  
 Դէ՛՛՛՛՛ զընկ զընկ, դէ՛՛՛՛՛ ջան.  
 Խովիւ ուշաթափ էնեմ,  
 Դէ՛՛՛՛՛ զընկ զընկ, դէ՛՛՛՛՛ ջան.  
 Առպալ 4 ուր ձեռքէն առնեմ,  
 Դէ՛՛՛՛՛ զընկ զընկ, դէ՛՛՛՛՛ ջան.

1) Կովի հորդին խոտ բերելու. 2) Պանզուխտ, օտար. 3) Պիտի ելնեմ. 4) Ցուպ հովուի:

Թայեմ քիրէն 1 երիցեմ,  
 Դէ՛՛՛՛՛՛ զընկ զընկ, դէ՛՛՛՛՛՛ ջան,  
 Մսխիրդ խտամ ոսկերչուն,  
 Դէ՛՛՛՛՛՛ զընկ զընկ, դէ՛՛՛՛՛՛ ջան,  
 Մախչայ 2 շինէ իմ ճակտուն,  
 Դէ՛՛՛՛՛՛ զընկ զընկ, դէ՛՛՛՛՛՛ ջան,  
 Մատնիք շինէ իմ մատուն,  
 Դէ՛՛՛՛՛՛ զընկ զընկ, դէ՛՛՛՛՛՛ ջան,  
 Գուպչայ 3 շինէ իմ ձեռքուն,  
 Դէ՛՛՛՛՛՛ զընկ զընկ, դէ՛՛՛՛՛՛ ջան,  
 Քամար շինէ իմ մէջքուն,  
 Դէ՛՛՛՛՛՛ զընկ զընկ, դէ՛՛՛՛՛՛ ջան,  
 Գուպաղ 4 շինէ իմ ոտուն,  
 Դէ՛՛՛՛՛՛ զընկ զընկ, դէ՛՛՛՛՛՛ ջան,  
 Աղբէր դիւ արի գնա,  
 Դէ՛՛՛՛՛՛ զընկ զընկ, դէ՛՛՛՛՛՛ ջան,  
 Շապիկ քեօ խան ու գնա,  
 Դէ՛՛՛՛՛՛ զընկ զընկ, դէ՛՛՛՛՛՛ ջան,  
 Մոխրաջրով վանամ,  
 Դէ՛՛՛՛՛՛ զընկ զընկ, դէ՛՛՛՛՛՛ ջան,  
 Թափ տամ վըր կուին փունմ,  
 Դէ՛՛՛՛՛՛ զընկ զընկ, դէ՛՛՛՛՛՛ ջան,  
 Եարիկ դիւ արի գնա,  
 Դէ՛՛՛՛՛՛ զընկ զընկ, դէ՛՛՛՛՛՛ ջան,  
 Շապիկ քեօ խան ու գնա,  
 Դէ՛՛՛՛՛՛ զընկ զընկ, դէ՛՛՛՛՛՛ ջան,  
 Սապոն ջրով վանամ,  
 Դէ՛՛՛՛՛՛ զընկ զընկ, դէ՛՛՛՛՛՛ ջան,  
 Թափ տամ վըր ծառին փունմ,  
 Դէ՛՛՛՛՛՛ զընկ զընկ, դէ՛՛՛՛՛՛ ջան.

1) Հնոցը. 2) Զարդ ճակատու. 3) Ապարանջան. 4) Ոտնակապ գարդ:

ԻԲ.

Թէլլին մնաց որբէւրի.

Դիւ ման կգաս վէրի վէրի 1,  
 Կրակն ընկէ սիրտդ էրի,  
 Թէլլին մնաց որբէւրի,  
 Դիւ ման կգաս եանա եանա 2,  
 Մէ ջան ունեմ՝ քե ղուրբան ա 3.  
 Ով որ ինձի քե դուշման ա,  
 Տարէն պտուտ հիւանդանայ:

ԻԳ.

Խոմար.

Խումարենց բակ էր կայտրմա 4,  
 Բայաք թոխլին 5 էր կայրմա 6,  
 Խումարն ուտէր որ կալանայ 7,  
 Սախակ վերէն ուրախանայ.  
 Դէ զիդի Խումար գեալ եանրմա,  
 Գիր գոյնրմա, աչ ղովարի սալ բոյնրմա.  
 Խումար կայներ դիւ ու կխաղայ,  
 Սախակ էկաւ գեաղա գեաղա 8.  
 Զուխան վրէն թոփնու թաղա 9,  
 Մանէթ մ՝ ետու, պաղնի մաղա 10.  
 Դէ զիդի խումար էլն,  
 Թաղա եափուն բացուել ալ ա,  
 Խումար պիրեր ջուխտ մ՝ բալայ,  
 Աստուած սիրես Սախակ աղա,

1) Ծանր ու բարակ. 2) Այս կողմն այն կողմն շրջուելով. 3) Դուրբ, մատաղ.  
 4) Քարայատակ. 5) Երկու տարեկան ոչխար. 6) Խորովնայ, տապակեայ. 7) Գիրանայ.  
 8) ձեմելով. 9) Բխանդամայն նոր. 10) . . . :

Բայէք տէրացդ խալաւ էրա.

Դէ գիդի խումար Լըն:

Խումար կերթայ օխտ քիլիսէն 1,

Անտէր մնայ էն օխտ քիսէն,

Պուզեամ կընեմ ձեր տան փեսէն.

Դէ գիդի խումար Լըն:

Էլանք տանիս թափ քելեցինք,

Վարմիր խնձոր կլորեցինք,

Յերդիս բացինք յերիշկացինք 2,

Խումար տուն չէր, նստանք լացինք.

Դէ գիդի խումար Լըն:

Խումար պարկէ պանծր յերէս բաց,

Դեղին կարպետ Պուրսայու պարձ.

Խումար քներ, երեսը բաց,

Սախակ էկաւ խելքը կընաց.

Դէ գիդի խումար Լըն:



ԻԴ.

Ասորու աղջիկ.

Ասորու աղջիկ, ջանքազու 3 աղջիկ,

Տնէն դուս արի, քեօ ծամեր տեսնամ,

— Դիւ ձի չը՞ս խեծէ, բրդամ չը՞ս տես:

Ասորու աղջիկ, ջանքազու աղջիկ,

Տնէն դուս արի, քեօ բաժն էլ տեսնամ.

— Շհար չը՞ս մտե, մնարէ 4 չը՞ս տես:

Ասորու աղջիկ, ջանքազու աղջիկ,

Տնէն դուս արի, քեօ աչքեր տեսնամ

— Դուքան չը՞ս նստե, ղութնի չը՞ս տես:

Ասորու աղջիկ, ջանքազու աղջիկ,

Տնէն դուս արի, քեօ ծծեր տեսնամ.

— Բոստան չը՞ս ցանե, շամամ չը՞ս տես:

Ասորու աղջիկ, ջանքազու աղջիկ,

Տնէն դուս արի, քեօ մէջքը տեսնամ.

— Բազար չը՞ս մտե, քեամար չը՞ս տես:



ԻԵ.

Պուտկով փլաւ եփեցիմ,

Տարամ տուիմ խաւերուն,

Խաւեր ձի ձու մ՞ ածեցին,

Տարամ տուիմ դարբնին,

Դարբին ձի դանակ մ՞ ետուր,

Տարամ տուիմ խօզուվուն.

Խոզիւ ձի մաքի մ՞ ետուր,

Մաքին արիմ Աստուծ մատաղ.

Աստուած ձի աղպէր մ՞ ետուր,

Աղպէր, աղպէր ես քե շուն,

Շորեր կարեմ քեզ նխշուն:



ԻԶ.

Քեօ էարն է՞ էս.

Դիւ արի ես, դիւ արի ես,

Խիւանդ եմ ես, խիւանդ եմ ես,

Առ խնձոր արի ձի տես.

Քեօ եարն եմ ես, քեօ ջանն եմ ես:

Եարն ի դադրեր կարսջին,

Ոսկի օղեր ախջին,

Փամութերի ուր եափնջին,

Քեօ կրակով զիս երեցիմ.

Խիւանդ եմ ես, խիւանդ եմ ես,

Առ խնձոր արի ձի տես.

Քեօ եարն եմ ես, քեօ ջանն եմ ես:

1) Եօթն եկեղեցին կամ խորանն. 2) Նայեցինք. 3) Լարախաղաց. 4) Մենարէ:

Գիշերը հազեան զիւս էլամ,  
 Մօրմօրիկ 1 ձիւն մ' էլ եկաւ.  
 Մէ բորիկ խեռ մ' էլ գնաց,  
 Ընկամ խաթան 2 խեռ էն խեթին գնացիմ,  
 Գնացիմ խասամ եարոց զիւս.  
 Գիւս բացիմ երիշկացիմ,  
 Եար տուն չէր նստամ լացիմ.  
 Խիւանդ եմ ես, խիւանդ եմ ես,  
 Առ խնձոր արի ձի տես,  
 Քեօ եարն եմ ես, քեօ ջանն եմ ես:

ԻԷ.

Սրտիկ չեղնես բարխուդար 5,  
 Տարին պիւրը խաւ քե եմ շիւար,  
 Դամ կեղնես շիւար, դամ կեղնես շահ ու խօնթըար 4.  
 Էնգախ 3 որ կեղնես շահ ու խօնթըար,  
 Ակաղես քեօ ասպապ 6 կերթաս սափար 7,  
 Էն դամ 8 որ կեղնես շիւար շափարդա 9,  
 Ինչպէս գեամին 10 վըր ծովուն բէ բուզգեար 11.  
 Մէկ դօստ 12 կայներ խէրանց երես բաց,  
 Ձեռ ծոց ափիկ երեսաց,  
 Էս օր քեղ ապով 13, զիս էնքան են ծեծած,  
 Չիմ արիւն զղած բամբկով են բունած,  
 Խոււմ ապրշուսով են կարած,  
 Լպատ 14 շաքրով են քաղած.  
 Էն դամ որ իմ աչք ընկաւ քեօ կարմիր երեսաց,  
 Ընչի կթուի վարդ էլ վըր ձի չեն թաղած 15.  
 Գիւ արի մէկ պագ առ կարմիր երեսաց,  
 Թօ զարկած եղնին զիս թամամած 16:

1) Թեթեւ. 2) վտանգ, փորձանք. 3) բաղտուոր, զօրանաս. 4) Թաղաւոր, կայր.  
 5) երբոր. 6) Ձէնք. 7) Պատերազմ. 8) երբոր. 9) Գրգում. 10) Կաւ. 11) Աննոյմ.  
 12) Մանօթ. 13) Պատճառաւ. 14) Եղիպտաշարար, Մարի նաբաթ. 15) Ձգած.  
 16) կատարած:

Ժողովան սիրելէք, արէք անենք մաջլիս,  
 Թակեցին զբերանս, տարան զֆոշնկանց բաշխիս.  
 Տարան թաղին Աւ ծովու խլիս 1,  
 Ղուրբան եղնեմ էն նոր մանուկին,  
 Որ էրթայ պերի Ֆոշնկանցս պաշխիս,  
 Բանայ Ֆարապի կողպիս:  
 Աղջիկ զիւ յուստ կգաս չատու խեռ 2,  
 Քեօ ընքներ նման էր Մորի թուր.  
 Քեօ թարթափներ նման էր Արապի նետ.  
 Ջարկիր յիմ սրտիկ, բացեր ես հետ,  
 Արուն էլաւ գնաց գետ,  
 Գնաց փրթաւ իմ խէրանց բաղչէն 3.  
 Սէֆել 4 պրզուլ 5 տարաւ խետ:  
 Մէկ մ' էլ անցաւ մեր բակէն չղիտեմ էն ուլ էր,  
 Կուղեմ եղնեմ պագիկ մ' աունեմ կարմիր երեսէն, մէկ դօստ  
 խուով էր.  
 Իմ դօստ խուով մի մնայ, խուով չէ աղէկ:  
 Տուն եմ շինե գետու բերան,  
 Ցաներ եմ խստերով թուխ ուհհան,  
 Էն մէկ տակն էր իմ դօստի նման,  
 2եմ զիտէ կտրեմ թէ թողնեմ սերման.  
 Քամի մեր դուներ մի տուր յիրուր,  
 Ոսկի բաղչէն ի նստեր, սե օձն պտուտ ի բողոր,  
 Էս օր զիւ գնա, կանուխ քե դաստուր 6:  
 Բաղչէ մ' եմ ցաներ, զիմաց ճրագին,  
 Թուխ ուհհան եղր քեաֆուր 7 խովեր էր վըր վարդին,  
 Ավախենամ անգէտ մարդեր կտրեն,  
 Տանեն տան կիսազին:  
 Մէկ դօստ ելեր կայներ վըր պանծրիկ պատերանց,  
 Աչքերն ի պախեր իմ ճամբխներանց,  
 Աթափի կըր արտոււնք, կթափի վըր շամամ ծծերաց:

1) Ցատակ. 2) Ի հեռուստ. 3) Պարտէզ. 4) Խղճուկ. 5) Սոխակ. 6) Հրաման,  
 քրաւունք. 7) Անհաւատ, անգուր:

Լաճիկ զիւ ասա, լաճիկ զիւ ասա,  
 Կախուաւ քարի խովեր, թափաւ բարասա,  
 Դիւ նոան զինի, ես կանաչ քասա 1,  
 Առնը մէկ կուժ ըմ զինի, երթանք նստենք զէմ Առնըսա 2,  
 Ես խմեմ զիւ անոյշ ասա:  
 Տօ լաճիկ զիւ ասա, սօ լաճիկ զիւ ասա,  
 Կտրաւ քարի խովեր, էկաւ մըջ իմ խէրանց խարին 3,  
 Իմ բաժն էր տակ մի թուխ ուէջան, մըջ ասաքարին 4,  
 Ծծերն էր պաղ 3 յաղպուր, մըջ մարմար քարին,  
 Կգամ խմեմ կանուխ էվարին 6:  
 Դառ չեկաւ աշուն, էկաւ քեալառուն 7,  
 Թռաւ սարերաց սօսուն, բուսաւ աժառուն 8.  
 Աժառուն նաղիք էր, չէր զիմնայ մօրմօր ձներուն,  
 Մէկ դօստն ի քնի, շաղ թալէ կարմիր երես,  
 Կուղեմ զեամ պագնեմ, կվախնամ խռովես,  
 Եար Տարալ ա, ըջ 9 դաշտերն էր կանաչ մէյդան 10,  
 Մէջն էր վարդ, պղտրն թուխ ուէջան,  
 Ձեռ տարայ տակն էլ կտրեցի,  
 Ձարկին զիմ ձեռը կտորեցին,  
 Կտորեցին զնգան թալեցին,  
 Մարդ չէկաւ ձի տեսութիւն,  
 Սուրբ Սարգիս էկաւ զիս էխան,  
 Խետ խանեց, խետ խրատ ետուր:

ԻԹ.

Հաւար 11 2աշմիկ 12, մադաթ 13 չաշմիկ,  
 Բեօ խէրանց տուն Աբրահամանց 14.  
 Աբրահամանց, բերդի զիմաց,  
 Բէստա սուրբ Գէորդ 15 շինած զիմաց:

1) Պնակ խեցի. 2) Անուն լերին ի Մոկս. 3) Խոտատեղին. 4) Բառ անձանթ. 5) Սառն. 6) Անձանթ. 7) Ձմեռն. 8) Թառամած բուսոց արմատէն աշնան երեւոյղ կանաչ բնծիւղն. 9) Մեծ. 10) Հրապարակ. 11) Աղալեմ. 12) Անուն աղջկան. 13) Պաղատիմ. 14) Անուն գիւղի. 15) Ս. Գէորդ:

Հաւար չաշմիկ, մադաթ չաշմիկ,  
 Պստկաբերան, խօրօտ չաշմիկ.  
 Գնացինք խասանք վըր կարմնջին,  
 Ոսկի օղեր ուր ակնջին,  
 2աշմիկ տուէք Մկրտրչին:  
 Հաւար չաշմիկ, մադաթ չաշմիկ,  
 Պստկաբերան, խօրօտ չաշմիկ.  
 Էկանք խասանք չուր մէյդնաթաղ,  
 Երկու քուրիկ էլած են խաղ,  
 Երկուս կխաղեն մէկ խաղ:  
 Հաւար չաշմիկ, մադաթ չաշմիկ,  
 Պստկաբերան խօրօտ չաշմիկ.  
 Գնացինք խասանք Լճանու 1 ջուր,  
 Խաւքեր էկան յուտուր պուտուր 2.  
 Կարմրակտուց նխուն փետուր,  
 Աստուած սիրես ձի մագ ըմ տուր:  
 Հաւար չաշմիկ, մադաթ չաշմիկ,  
 Պստկաբերան խօրօտ չաշմիկ.  
 Գնացինք խասանք փութկու կաներ 3,  
 Սէքօն 4 ծաղկի տուեր ծէրէր,  
 Ցամբեր ոչխար բաղլըր 3 բէրեր,  
 Մալուէլ էրիւր շուշադարներ 6:  
 Հաւար չաշմիկ, մադաթ չաշմիկ,  
 Պստկաբերան խօրօտ չաշմիկ.  
 Գնացինք խասանք չուր գեաղի 7 դէլ,  
 Սրտուռ մաքեր էլած են ուեղ 8,  
 Ծեղ են տուած քանց մճաղէս 9:  
 Հաւար չաշմիկ, մադաթ չաշմիկ,  
 Պստկաբերան խօրօտ չաշմիկ.  
 Գնացինք խասանք չուր Պուղունիս 10:

1) Անուն գիւղի. 2) Գուցէ տեսակ տեսակ. 3) ձանապարհ ս. Գէորդ անուն ուխտատեղոյ. 4) Բոյս. 5) Գաղարբ է. 6) Ոչխար կթողներ. 7) Տեսակ վառելիք, գաւայ, տան. 8) Շար, կարգ. 9) Բոյս. 10) Գիւղ մի:

Տեղ չտուին քնանք տանես,  
 Խաց չտուին, կերանք ուղիս 1.  
 Հաւար չաշմիկ, մաղաթ չաշմիկ,  
 Պստկաբերան խօրօտ չաշմիկ.  
 Գնացինք խասանք չուր ջաղցներ,  
 Զաղցսան ընկեր անոյշ քներ,  
 Զուրն ի ընկեր քիւ ջաղցներ,  
 Ատորեր գերան, սները թուեր,  
 Զէտն ի տարեր, փետն ի թողեր:  
 Հաւար չաշմիկ, մաղաթ չաշմիկ,  
 Պստկաբերան խօրօտ չաշմիկ.  
 Գնացինք խասանք չուր վըր դիտուն 2,  
 Մեր դէմ տուինք բուքն ու քամուն.  
 Զի տուն չկայ, քի տանեմ տուն,  
 Ես ի՞նչ ընեմ խըտ քեօ խղճուն.  
 Հաւար չաշմիկ, մաղաթ չաշմիկ,  
 Պստկաբերան խօրօտ չաշմիկ.

Լ.

Եկին եկին, Մոկաց խարսներ.  
 Արախանօր նանանօր:  
 Մոկաց խարսներ են քնարով.  
 Արախանօր նանանօր:  
 Եկին եկին, Սեղայ 5 լաճեր.  
 Արախանօր նանանօր:  
 Սեղայ լաճերն են խանչարով.  
 Արախանօր նանանօր:  
 Գնացինք Բաղէշ ու Պեթլիզ.  
 Խանիկ նանիկ, ջան նանիկ.  
 Բաժն էր բարակ յերկէն վիզ.  
 Խանիկ նանիկ, ջան նանիկ.

1) Գաւոր. 2) Լերին. 3) Անուն զիւզի.

Քեօ Աստուած սիրես, զրկես զես,  
 Խանիկ նանիկ, ջան նանիկ:  
 Գնացինք Բաղէշ սուրբ նշան.  
 Խանիկ նանիկ, ջան նանիկ:  
 Էրթանք խամրերն սուրբ նշան.  
 Խանիկ նանիկ, ջան նանիկ:  
 Ոսկի մատնիք քեօ նշան.  
 Խանիկ նանիկ, ջան նանիկ:  
 Դէ գեալ դէ Մուշլի օղան 1.  
 Խանիկ նանիկ, ջան նանիկ:  
 Խանչար գիւմիշլի օղան 2.  
 Խանիկ նանիկ, ջան նանիկ:

ԼԱ.

Խան գիւլ խանան գիւլ.

Դիւ արի, էրթանք մեր տուն.  
 Խան գիւլ, խանան գիւլ:  
 Ես յիւր 5 վէ յիւր գամ ձեր տուն.  
 Խան գիւլ, խանան գիւլ:  
 Լաւ օղուշաղ կայ մեր տուն.  
 Խան գիւլ, խանան գիւլ:  
 Լաւ տղամարդ կայ մեր տուն.  
 Խան գիւլ, խանան գիւլ:  
 Դիւ արի էրթանք մեր տուն.  
 Խան գիւլ, խանան գիւլ:  
 Ես յիւր վէ յիւր գամ ձեր տուն.  
 Խան գիւլ, խանան գիւլ:  
 Լաւ սեղաղ 4 կայ մեր տուն.  
 Խան գիւլ, խանան գիւլ:

1) Եկ արդ Մշեցի տղայ. 2) Արծաթեայ դաշոյն ունեցող տղայ. 3) Վասն էր.  
4) Զէնք:

Դիւ արի երթանք մեր տուն.

Խան զիւլ, խանան զիւլ:

Ես յիւր վէ յիւր գամ ձեր տուն.

Խան զիւլ, խանան զիւլ:

Շարէ 1 շապիկ կայ մեր տուն.

Խան զիւլ, խանան զիւլ:

Աստուած աւրի զիւր շինողի տուն.

Խան զիւլ, խանան զիւլ:

Դիւ արի երթանք մեր տուն.

Խան զիւլ, խանան զիւլ:

Ես յիւր վէ յիւր գամ ձեր տուն.

Խան զիւլ, խանան զիւլ:

Վիզ վզանոց կայ մեր տուն.

Խան զիւլ, խանան զիւլ:

Յո՛ւստի բերած վիզ վզանոց.

Խան զիւլ, խանան զիւլ:

Շամ Հալապա ի բերած.

Խան զիւլ, խանան զիւլ:

Դիւ արի երթանք մեր տուն.

Խան զիւլ, խանան զիւլ:

Ես յիւր վէ յիւր գամ ձեր տուն.

Խան զիւլ, խանան զիւլ:

Ղուծնի կապայ կայ մեր տուն.

Խան զիւլ, խանան զիւլ:

Ղուծնի կապէն յո՛ւստի բերած.

Խան զիւլ, խանան զիւլ:

Ղուծնի կապէն Շամայ ի բերած.

Խան զիւլ, խանան զիւլ:

Դիւ արի երթանք մեր տուն.

Խան զիւլ, խանան զիւլ:

Ես յիւր վէ յիւր գամ ձեր տուն.

Խան զիւլ, խանան զիւլ:

1) Գուցէ շալ:

Ոսկի արծաթ կայ մեր տուն.

Խան զիւլ, խանան զիւլ:

Ոսկի արծաթ յո՛ւստի բերած.

Խան զիւլ, խանան զիւլ:

Ոսկի արծաթ յՈւուուսէթա 1 ի բերած.

Խան զիւլ, խանան զիւլ:

ԼԲ.

Էլանք որ էլանք, էլանք վըր թԼԼին 2,  
Էլանք վըր թԼԼին շուռ առինք մէյրան,  
Էրկու պաղ յաղբիւր քո տկնէն յէլան,  
Մէկն ի թըխ զոզան 5 մէկն ի թըխ բառին 4:

Էն ինչ թըխ զոզան, սրսուռ մաքերանց,  
Էն ինչ թըխ բառին դարիպ խաւքերանց.  
Յորեն եմ ցանէ խըտ արտի ափան,  
Ելեր ի տուեր խըտ արեգական,  
Կարեաւքեր կերած տուած ծկական 5,  
Ժողվան թուրքէք 6 էնեն ծառական 7,  
Զարկեն զէն մէկն էլ բրինդայ էրին 8:  
Բրին խոր ինկեր տեղ վոայ չի գայ,  
Եարն ի խուովեր իմ մօտը չի գայ.  
Տղէն ըղըկեցէք որ էլնի ի գայ:

ԼԳ.

Ծալ էրա Հայ ծալ էրա.  
Դիլբար Շիլան ծալ էրա:  
Ես էլ կլնեմ քե փեսայ.  
Դիլբար շիլան ծալ էրա:

1) Ռուսաստանէն. 2) Կատար լերին, գեաղուկ. 3) Ամարանոց. 4) Արեւակող.  
5) Մնացել է կոկորդին, խեղդուել են. 6) Հրացանակիր որսորդ. 7) Որսան. 8) Վի-  
րաւոր:

Խոտ կրերեմ Առնոսայ 1.  
 Դիլբար շիլան ծալ էրա:  
 Մէկ եարին աչով էրա.  
 Դիլբար շիլան ծալ էրա:  
 Մէկ եարն էկաւ զատով խետ.  
 Դիլբար շիլան ծալ էրա:  
 Կարմիր խնձոր բերէր խետ.  
 Դիլբար շիլան ծալ էրա:  
 Մէկ եար էլի արի տես 2.  
 Դիլբար շիլան ծալ էրա:  
 Մարդ չես գտնի կեօ իմ պէս.  
 Դիլբար շիլան ծալ էրա:  
 Ինչ ես ասեմ դիւ գիտես.  
 Դիլբար շիլան ծալ էրա:  
 Ման գալով երթաս Թաւրէզ.  
 Դիլբար շիլան ծալ էրա:  
 Մարդ չես գտնի կեօ իմ պէս.  
 Դիլբար շիլան ծալ էրա:

ԼԴ.

Մշու սարեր մշուշ էր.  
 Հար նազ հար նազ հար նարգիլ:  
 Մշու խոտ ջուր անուշ էր.  
 Հար նազ հար նազ հար նարգիլ:  
 Մշու մարդը դոչաղ էր 3.  
 Հար նազ հար նազ հար նարգիլ:  
 Մշու կուռնկ յերկնալիլ.  
 Հար նազ հար նազ հար նարգիլ:  
 Յերկնալիլ լինազեարտան 4.  
 Հար նազ հար նազ հար նարգիլ:

1) Լեան. 2) Այս կողմն. 3) Քաջ. 4) Լպեալանջ:

Դիւ էլ չատու եկեր ես.  
 Հար նազ հար նազ հար նարգիլ:  
 Չատու եկեր ես ձի տես.  
 Հար նազ հար նազ հար նարգիլ:  
 Կարմիր խնձոր պիրեր ես.  
 Հար նազ հար նազ հար նարգիլ:  
 Գիւլ ուէհան պիրեր ես.  
 Հար նազ հար նազ հար նարգիլ:

ԼԵ.

Գեաշտ 1 էրեր ենք մայաք 2 ամէն,  
 Թուղթ մէլ էրի ջղերու 3 տարզին 4.  
 Եկեր խասաւ Մոկաց մերցին,  
 Ին էլ կարդաց քաղցրիկ լեզուէն.  
 Կախուաւ մուրսէն, քեաղվաւ կարմիր երեսէն.  
 Դիւս բերէք էն բող 3 տանէն 6)  
 Սաֆար 7 կերթամ ջղերու դարգէն.  
 Գնաց խասաւ չուր ջղերէն,  
 Եկին թափան շհար զըմէն.  
 Մոկաց միրգէն կարժէր շոհար զըմէն.  
 Խէրիք չտեսներ կողոտ 8 խօջէն 9,  
 Առեց փարէն գնաց շուկէն,  
 Ետու առեց բաշլէն 10  
 Դանակ տեղից մէկ երեսէն,  
 Ետու կերաւ Մոկաց միրգէն.  
 Կախուաւ մուրուսէն, քեաղվաւ կարմիր երեսէն.  
 Եկինք խասանք չուր Բոնաշէն 11,  
 Կուժ ու կթղէն կապած նաշէն 12.  
 Խաբար տարէք խէրկան մէրկան,  
 Թանկ Նազլխան չտան երկան 13:

1) Ուրախութիւն. 2) Գուցէ բոլոր. 3) Քաղար. 4) Անձանօթ. 5) Սպիտակ. 6) Արջառ. 7) Պատերազմ. 8) Կարմիկ. 9) Խօժայ կանուանեն առնասարակ վաճառական կամ պատուաւոր անձին. 10) Զմերուկ. 11) Անուն դիւղի. 12) Գազազէն. 13) Մարդոյ առն:

Եկինք խասանք Խնկոս տարիէն 1,  
Մէկ հանաղէն 2 ջանաղէն 5.

Կխաղէն էն մէկ խաղ:

Եկինք խասանք չուր միջածաղ,  
Խարար տարէք խերկան մերկան,  
Կացէք բարով խաղար տարով.  
Թանկ նազլխան թող տան էրկան.  
Տարան տրին մըջ պողերուն,  
Դիւուն էլ բացին հարաւ քեամուն.  
Կացեք բարով խաղար տարով:

ԼԶ.

Թուխ աչքեր տնէն իլեր ես կերթաս տանիք,  
Դիւ ես քեօ ջուխտակ տէգեր կնիկ.

Պագըմ կուզեմ էրէս կկայնես.

Աստուծու սիրուն մարդ կսպանես:

Թուխ աչքեր տնէն իլեր ես կերթաս յիզին.

Աստուած սիրես արի մի առ զեմ խողին.

Թողնեմ կերթամ կարիպութիւն չար զերութիւն.

Հաւար թուխ աչ, մարաթ թուխ աչ:

Թուխ աչքեր տնէն իլար կերթաս կանաչ մէյդան.

Տեղուկ աչքերդ զիմ ջան կերան.

Թուխ աչքեր իձնէ մի մնայ խոով.

Ես կմեռնեմ քեզի ապով.

Դիւ կնմանես նռան զինի,

Դիւ խմի, ես ասեմ անուշ լինի.


Արի էրթանք մեր տուն խուր,

Թուխ բաշ մաքին մատաղ կտրեմ,

Ջանիդ խամար զուրպան կէնեմ,

Աստուած սիրես, զիս ձեր տուն զօնախ էնես:





ՀՀ Ազգային գրադարան



NL0340614

